



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 15 » փետրվարի 2019 թվականի N: 11 ք.Գյումրի

ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ, ԲԱՐՍԵՂ ՔՈԶԱՐՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի 2019 թվականի փետրվարի 14-ի զեկուցագիրը.

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

Ֆինանսական աուդիտ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին, գլխավոր մասնագետներ Բարսեղ Քոչարյանին, Արտակ Հայրապետյանին և Սամվել Հարությունյանին գործուղել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետափի և Նոր Ախուրյան գյուղեր՝

1. 2019 թվականի փետրվարի 15-ին, 18-ին և 19-ին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գետափի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
2. 2019 թվականի փետրվարի 20-ին, 21-ին և 22-ին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Նոր Ախուրյանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկական հետ ճիշտ է

